

Լ.Ա.ՐԱՒԻՐ  ՄԱՐՏԻԿԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՏ. ԿՈՒՐՏԻԿՅԱՆ

ՀԵՐՈՍՈՒՎԻՆԵՐԸ



ՀԱՅՊԵՏՆՐԱՏ

ԿՈՐԾԻՐ ՄԱՐՏԻԿԻ ԳՐԱԳԱՐԱՆ

891.99

Կ-88

ՍՏ. ԿՈՒՐՏԻԿ ՅԸՆՆ

ՄԻՋԳԱՆԻԿ 1961 թ.

ՀԵՐՈՍՈՒ ՀԻՆԵՐԸ

1
A 5590-23.512



ՊԵՏՅՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1943

СТ. КУРТИКЯН

Героини

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1943

ՓԱՌԻՔ ՀԵՐՈՍՈՒՀԻՆԵՐԻՆ

1125 թիվ: Թշնամին պաշարել էր Հայաստանի հրաշակերտ Անի մայրաքաղաքը: Մուսուլման հորդաներից կազմված ստվարաթիվ մի բանակի գլուխն անցած՝ Փաթլան անունով ամիրան անընդհատ գրոհում էր Անիի պարիսպների վրա: Քաղաքում գտնվող հայերը հերոսաբար պաշտպանում էին իրենց սիրելի ու նվիրական Անին, նրա սրբազան կուլտուրան ու գանձերը և մի ամբողջ տարի թշնամուն չէին թողնում քաղաքի պարիսպներից ներս թափանցել:

Այդ անհավասար հերոսամարտերի ժամանակ հայ տղամարդկանց կողքին հայտնվեց մի կին, որը կովողների շարքում անմիջապես աչքի ընկավ իր քաջությամբ: Արհամարհելով մահը, նա պարսպի վրայից կատաղորեն քարկոծում էր քաղաք ներխուժելու փորձեր կատարող վայրագ

Թշնամուն, եղնիկի ճկունությամբ և արագությամբ վազում էր այնտեղ, ուր ավելի սպառնական էր դառնում Թշնամու գրոհը և իր ներկայությամբ մարտի էր ոգեշնչում քաղաքի պաշտպաններին:

Մեր պատմագիրները գրում են, որ այդ առյուծասիրտ հայուհին, չնայած նետերի տարափին, անսասան էր մնում իր մարտական դիրքում, արագ շարժումով իր մարմնից հանում էր Թշնամու արձակած նետերը և դրանցով իսկ խոցում գազազած ոտխին:

«Առ ոչինչ համարեալ ղխոցուածս նետիցն զոր վիրաւորէին արտաքուտս և էր անուն նորա ըստ արժանի արագութեան իւրոյ, Այծեամս կոչեցեալ» գրում է պատմագիր Սամուել Անեցին:

Իր սիրելի հայրենիքի, իր նվիրական մայրենի օջախի պաշտպանության սրբազան դիրքերում զոհված այս հայուհին, Անեցի Այծեմսիկը, անթառամ փառքով է պսակել իրեն: Նրա անունը՝ սակի տառերով է գրվել հայ ժողովրդի հերոսամատյանում:

Եվ այսօր, ավելի քան 800 տարի անց, Այ-

ծեմնիկի անվան վերհիշումը սրբազան դող է առաջ բերում մեր սրտերում:

*
*
*

Հայ ժողովուրդն իր բազմադարյան ազատագրական պայքարի ընթացքում ունեցել է իր բազմաթիվ այծեմնիկները—իր հերոսուհիները:

Ահա ավելի ուշ շրջանի, անցյալ դարի վերջերի դյուցազնուհիներից մեկը՝ Զեյթունցի Մարիամը:

Բռնակալության և կեղեքումների դեմ ապստամբության դրոշ պարզած զեյթունցիների շարքում, հրացանը ձեռքին, նա կռվում էր արիաբար, իր անձնվեր ու դյուցազնական կերպարով հերոսությունների ողեշնչելով զեյթունցիներին: Եվ նրանք կռվում էին առյուծի քաջությամբ: Զեյթունը մտում էր անառիկ, թեև պաշարման երկաթե օղակի մեջ:

Անցան բազմաթիվ ամիսներ: Սպառվեց զեյթունցիների ռազմամթերքը: Այդ մասին թըշնամին ոչինչ չգիտեր: Միակ փրկությունը կայանում էր դրսի աշխարհի հետ կապի մեջ: Սա-

կայն սվ կարող էր ճեղքել թշնամու երկաթե
օղակը և կազմակերպել Զեյթունի փրկության
գործը:

— Ես կանեմ այդ, — վճռեց Մարիամը:

Զեյթունցի տղամարդիկ հակառակվեցին:
Ինչպե՞ս կարելի էր թույլ տալ, որ թշնամու գիր-
կը, մահվան գիրկը գնա մի հայունի, մի զեյ-
թունցի կին, երբ դեռ տղամարդիկ կենդանի են:

— Ինձ հետ ոչինչ չի պատահի. թշնամուն
խաբելու համար նպատակահարմար է, որ ես
գնամ: Ես կգնամ և կկազմակերպեմ Զեյթունի
փրկության գործը, — հաստատ ու վճռական տո-
նով կրկնեց Մարիամը:

Ու նա արհամարհելով մահը և անարգանքը
անցավ թշնամու զորքերի միջով, անցավ պայ-
ծառ ճակատով, որպես դյուցազնունի, և գլուխ
բերեց ապստամբ ժողովրդի փրկության գործը:

Այսօր, հայրենական պատերազմի այս դա-
ժան օրերին, Անեցի Այծեմնիկի ու Զեյթունցի
Մարիամի արժանավոր հետնորդ հայունիները,
մեր քույրերը, նորանոր սխրագործություննե-
րով հռչակում են հայ կնոջ անունը և հայ ժո-

դովրդի հերոսամատյանում ավելացնում այնպիսի նվիրական անուններ, որոնցով կհպարտանան ապագա սերունդները՝ երկյուղածությամբ ասելով՝

—Փնռք հայրենական մեծ պատերազմի մեր Այծհմնիկներին:

ՔՈՒՅՐԸ

Բարձունքում ամրացած հակառակորդն իր կրակային բների թևային կրակով աշխատում էր արգելակել մեր զորքերի առաջխաղացումը: Սակայն անօգուտ: Մարտիկները քայլ առ քայլ առաջ էին շարժվում:

Շուտով թշնամին կրակային նոր միջոցներ կենտրոնացրեց զրոհողների վրա: Մերոնք միառժամանակ մեխվեցին գետնին և մեր հրետանին սկսեց ուժեղ մշակել հակառակորդի առաջավոր եզրն ու կրակային բները: Թշնամու կրակային հեղեղը չէր թողնում, որ սանիտարները շտապ օգնություն հասցնեն վիրավորներին:

Պայթում էին արկերն ու ականները և հո-

դային շատրվան էր բարձրանում դեպի երկինք։
Մահաբեր այդ հեղեղի միջով, օգտագործելով տե-
ղանքի ծալքերն ու թփուտները, առաջ էր շարժ-
վում, ավելի ճիշտ առաջ էր սողում մի սևահեր
ու սևաչյա աղջիկ։ Առանց ուշադրություն դարձ-
նելու թափվող արկերին ու ականներին, նա
մոտեցավ առաջին վիրավորին և անմիջապես
կասեցրեց արյունահոսությունը, կապեց աջ թևն
ու գլուխը։ Վիրավորը նայեց այդ լիքն ու կարմ-
րաթուշ աղջկան և նրա գունատ դեմքին մի
թեթև ժպիտ խաղաց։ Ապա դողացին նրա չորա-
ցած շրթները և նա միայն մի բառ կարո-
ղացավ արտասանել։

— Ի՞նչ...

Սիրուշ Արևշատյանը հասկացավ, թե այդ
միավանկ բառով ինչ էր ուղում ասել վիրավո-
րը։ Նա քնքշորեն, ժպիտը դեմքին, վիրավորի
գլուխը վերցրեց ու հենեց իր կրծքին և ջրա-
մանից մի քիչ ջուր կաթեցրեց նրա բերանը։

Վիրավոր մարտիկը կյանք ստացավ, կար-
ծես վերածնվեց ու խորը շունչ քաշեց։ Ապա
նա էլ ժպտաց քրոջը և մեղմ ասաց.

—Որ մեռնեմ էլ, այժմ հանդիստ հոգով
կմեռնեմ, քեւրք...

—Գու կապրես եղբայր, վերքդ չնչին բան
է,—ասաց Սիրուշը ու չափազանց զգուշութեամբ
վիրավորի գլուխը հենելով մի զինվորական տապ-
րակի, ինքը սողեսող նորից շարժվեց առաջ՝ մի
ուրիշ վիրավորի մօտ։ Այդ բոպելին քրոջից 15—
20 մետր հեռավորութեան վրա պայթեց ականը։
Մի փոքրիկ բեկոր կրծեց քրոջ կիսամուշտակի
ձախ թևը, սակայն նա հասավ վիրավորին, արա-
զորեն պայուսակից հանեց սպիտակ փաթաթանն
ու յուղանյութով ձծված դարչնագույն բամբակը
զրեց վերքի վրա, և թեթևորեն կապեց վերքը։

Նվ այսպես, հակառակորդի ուժեղ կրակի
տակ, նա կապեց 14-րդ վիրավորի վերքը։ Վեր-
ջին վիրավորը ծանր դրութեան մեջ էր. նրա
կյանքը փրկելու համար անհրաժեշտ էր արագ
կերպով օպերացիա կատարել, իսկ դրա համար վի-
րավոր մարտիկին պետք էր մոտ երեք կիլոմետր
դուրս տանել ռադմադաշտից ու հասցնել սանմաս։
Սիրուշը ռիսկ ունեւր մահվան վտանգն արհամար-
հելու, սակայն արդյոք անհրաժեշտ ուժը կու-

նենամբ: Նա մեկ էլ նայեց վիրավորի դժգունած դեմքին, կապտած շրթունքներին և զգաց, որ նրա կյանքը կախված էր մազից: Եվ քրոջ փոքրիկ մարմնի մեջ կուտակվեց մեծ ուժ. ու նա անմիջապես վիրավորին վերցրեց իր շալակը և սկսեց սող տալ: Վիրավորն արդեն կորցրել էր իր գիտակցությունը: Իսկ Սիրուշն արիաբար ու հեիհե տանում էր իր ծանր բեռը: Քույրն արդեն անցել էր կես ճանապարհը, երբ նրան օգնության հասավ սանիտարը և միասին վիրավորին հասցրին սանմաս:

Սիրուշը հոգնությունից ընկավ գետին, բայց նորից ոտքի բարձրացավ, ուղղվեց ու մտավ վիրավորի մոտ:

Նրան հուզված ու ջարդված տեսնելով հարցավեցին.

— Ի՞նչ է պատահել Սիրուշ, հո վիրավորը քո ազգականը չէ:

— Ո՛չ, — պատասխանեց նա:

Հաջող օպերացիայից հետո, երբ վիրավորն աչքերը բացեց, իր գլխավերևում էլի տեսավ Սիրուշին: Նա արդեն ճանաչեց սանիտարական

զումարտակի կայտառ աղջկան՝ Սոնյային— Սիրուշին:

Ուկրաինացի ոսկեծամ վիրավորն ուղեց շնորհակալություն հայտնել իր կյանքի փրկչին ու նա թոթովեց մի բառ.

— ԲՆՆՅՐ...

Ինչքան քաղցր, ինչքան մեղմ ու եղբայրական հնչեց այդ մի բառը, մի վանկը:

Սիրուշ Արևշատյանի սիրտը բաբախեց ու փայլեցին նրա խոշոր, սև աչքերը:

Նա իրեն երջանիկ զգաց:

ՀԱՅՈՒՀԻՆ

Այս կենսուրախ, չարածճի աղջիկը շատ էր սիրում խաղալ վաթսունամյա կոլլտոզնիկ Գեորգի Նիկոլոյի հոգու հետ և մեծ բավականություն էր զգում, երբ նա ջղայնացած, ձեռքերը թափ տալով հեռանում էր, անհասկանալի, օսեթերեն բառեր մրթմրթալով քթի տակ...

Այսպիսի դեպքերում Գեորգի Նիկոլոն պարտըյուրոյի քարտուղարին գանդատվում էր.

—Թեթև աղջիկ է, շատ թեթև, և որանդից էլ ընկել է մեր մեջը...

—Ես ձեզ հետ համաձայն չեմ, քեռի Նիկոլո: Ինչո՞վ է թեթև: Ի՞նչ վատ բան էք տեսել որ...

Գեորգի Նիկոլոն, ծա պարտիզանը, որին մարտական կոլեկտիվում ուղղակի քեռի էին անվանում, անհանգիստ շարժում էր անում, ջղախնայանում:

Պարտուրոյի քարտուղար, կապիտան Սանդրո Սարգսյանը զգում էր, որ իր առարկությունը դուր չէր գալիս նրան:

—Սփսոս, հազար փոսոս,—խոսով սրտով կրկնում էր քեռին,—որ Վասիլին նրան գույզ է **ընկել...**

Քեռի Նիկոլոն ակնարկում էր Անահիտ Շահնազարյանի ամուսնուն՝ լեյտենանտ Վասիլի Ռիչկովին, այդ տոկուն ու համեստ ունև մարդուն:

Անյան (այդպես էին կոչում Անահիտին) հագնվում էր տղամարդու նման—բամբակե հաստ շալվար, տելոգրեյկա, գլխին՝ փափախ, մեջքին՝

աւարձանակ, իսկ երթի ժամանակ ուսին՝ այլտոմայտ: Նա, տղամարդկանց շրջանում իրեն պահում էր չափազանց աղատ ու անկաշկանդ, սրբտով խոսում էր ու կատակում մարտակից ընկերներին հետ: Եվ այդ ոմանց դուր չէր գալիս: «Նրանից ի՞նչ կուլող դուրս կգա որ...» ասում էին թերահավատները:

Սակայն, պատերազմի պայմաններում, տառացիորեն, նույնիսկ բոպենների ընթացքում, հնարավոր է լինում ճիշտ ճանաչել մարդկանց, ռազմադաշտի հայելու մեջ ատենել նրանց իսկական դեմքը, ճանաչել իսկական հայրենասերին և մանր, վախկոտ ու մերթեպաշտ մարդուն, ճանաչել մարդու մեջ այն հատկությունները, ինչ որ մեզ հաճախ չի հաջողվում ճանաչել խաղաղ պայմաններում, երբեմն նույնիսկ տարիների ընթացքում:

...Սակայն կապիտանն ի դուր էր փորձում համոզել իր կարծիքում անսասան կոլխոզնիկ պարտիզանին.

— Դուք դեռ նրան մարտում չեք տեսել, քեռի: Աղջիկ է, կծիծաղի էլ, կերպի էլ, և... տղե-

ըանց հետ հանաքներ էլ կանի, թայց գործի ժամանակ էլ գործ, մի գուցե ավելի լավ գործ, քան...

Ու, յուրաքանչյուրն իր կարծիքին՝ նրանք բաժանվում էին իրարից:

* * *

Ձյունամորիկների միջով մարտական կուլեկտիվն այսօր անցել է երեսունհինգ կիլոմետրից ավելի ճանապարհ և այժմ կանգ է առել կիրճից վերև տարածվող ծմակում, մի փոս անդ գիշերելու համար:

Մարդիկ ճյուղերից և թփերից ծածկ են սարքում և վառում են խարույկը: Պետք է չորացնել շորերը և քնել խարույկի կողքին:

Տղամարդկանց հետ, հոգնած և ուժասպառ, խարույկի մոտ են ընկել նաև կանայք՝ ուղիստուհի Նատալիա Ֆրեչկոն, ավտոմատալոր Անահիտ Շահնազարյանը և հետախույզ Եվգոկիա Ռոմանովան:

Մարմնի այն կեսը, որ խարույկի դեմն է հաճելի տաքություն է զգում, մինչդեռ մյուս

կեսը սառչում է, անհանդստացնում: Սակայն քունը հաղթում է ամեն ինչի: Փակվում են նրանց աչքերը՝ ձյունե անկողնի վրա:

Միառժամանակ անց Անյան զարթնում է ցրտից: Անհրաժեշտ է շուռ գալ և տաքացնել մարմնի սառած կեսը...

Մի անգամ սառնամանիքների միջով դժվարանցանելի կածանով բարձրանալիս, ընկերները նրան ասացին.

—Անյա, հասկացիր, դու կին ես, արի այս երկու ամիսը մնա քաղաքում, հետո նորից կմիանաս մեզ հետ:

Նա ժպտաց և ուրիշ պատասխան չտվեց:

Արդեն երրորդ ամիսն է, որ նա կովկասյան այս բարձրաբերձ լեռներում, խոր կիրճերում ու անտառներում շրջել է մոտ 500 կիլոմետր տարածություն, թրջված ու ցեխոտված քնել է ձյան վրա, հաճախ բաց երկնքի տակ...

*
* *

... Անցնում էին սխրագործություններով հարուստ օրերը: Թշնամու թիկունքում սովետա-

կան մարդիկ ոչնչացնում էին նրա կենդանի
ուժն ու տեխնիկան, պայթեցնում էին կամուրջ-
ները, ռազմամթերքի պահեստները, ակադեմիա-
տում էին ճանապարհները և հաճախ անհավա-
սար բայց հաղթական մարտեր էին մղում թըշ-
նամու դեմ:

...Այս անգամ այնպես պատահեց, որ մար-
տի ժամանակ Անյան և քեռի Նիկոլոն, մի խումբ
մարտիկների հետ միասին ընկան իրար շատ
մոտիկ—միևնույն խրամատի երկու ծայրերը:
Նրանք մի գուցե կողք-կողքի ընկնեին, եթե
քեռին նրան նկատելով խրամատի մյուս ծայ-
րը գնացած չլիներ:

Այսօր մարտական կոլեկտիվը դիմադրում
էր հարձակվող գերմանական զորքերին, որոնք
փորձում էին ճեղքել խիզախների շղթան և պա-
շարել նրանց:

Դրուժյունը լուրջ էր: Բայց մարտում
փորձված հրամանատարը միշտ էլ որևէ ելք գտ-
նում է ամենադժվարին, անհուսալի համարված
կացությունից իսկ: Եվ անհ հրամանատարը
կարգադրեց լեյտենանտ Ռիչկովին, մի բռնը

մարտիկներին հետ միասին, հեռանալ պաշտպանութեան հիմնական գծից, շրջանց կատարել անտառով և հանկարծակի հայտնվելով հակառակորդի ձախ թևից, ուժեղ կրակ բացել: Այդպես էլ կատարվեց: Թշնամին անակնկալի դալով մի քիչ հետ քաշվեց:

Երեկոյան դեմ, հակառակորդը համոզվելով, որ թևից հարվածում են չափազանց սակավաթիվ մարդիկ, ուժեղ կրակով նորից առաջ շարժվեց, սպառնալով Ռիչկովի մարտիկներին շրջապատել և կենդանի բռնել:

Հեռվից, իր խրամատից, այդ վտանգը նկատեց Անյան: Հայտնեալ թուխ աչքերը փայլեցին, ինչպես սև սաթը, նրա երակներում եռ եկավ լեռնային Ղարաբաղցու արյունը և նա խրամատի եզրում կանգնել էր այնպես լարված, ինչպես էգ վագրը՝ երբ վտանգ է սպառնում իր կորյուններին...

Նրա գունատ դեմքին մեծանում էր սև խալը: Նա ուզում էր ինչ որ մի բան ասել, մի բան անել, լուրջ ու դժվար բան...

Անյան այլևս չկարողացավ համբերել: Ավ-



տոմատը բարձր պահած, նա խրամատից դուրս
խոյացավ ու գոռաց կանացի իր ամբողջ ուժով.

— Հանձն հայրենիքի, հանձն Ստալինի
ինձ հետ գրոհի...

Ու թշնամու կրակի տակ Անյան թռիչքնե-
լով սլանում էր առաջ, իր ետևից գրոհի տանե-
լով մարտական ընկերներին:

Անիայի անմիջապես կողքից գրոհի էր
գնում նաև քեռի Նիկոլոն...

... Երեկոն իջավ: Կապույտ մշուշն սկսեց
տարածվել անտառի վրա: Կատաղի, խլացուցիչ
մարտից հետո ավելի խորն էր զգացվում իրիկ-
նային խաղաղությունը, ավելի ուժեղ և հանդի-
սավոր էր զգացվում լուսթյունը: Թշնամին չկա-
րողանալով կենսագործել իր սլանը, հետ էր
շարտվել:

Մարտից հետո բոլորը կոլեկտիվում խո-
սում էին խիզախ և լուրջ Անիայի մասին, որի
գնդակներից երեք հիտլերական գերեզման էին
գտել միայն այդ մարտում:

*
**

Հաղթանակի գիշերը խաղաղորեն թևերը

տարածեց սպիտակ անտառի վրա: Երկինքը և լեռնագագաթները ձուլվեցին իրար հետ: Մարդիկ ուրախ էին զգում իրենց, ուրախ և տոնական տրամադրության մեջ:

Անտառի խորքում, դարավոր, մամռապատ ծառի տակ սարքված հյուղակում էլի լավում էր Անիայի զրնգուն ձայնը: Նա երգում էր տանկիստների սիրած երգը.

Три танкиста,
Три веселых друга
Экипаж машины боевой...

Քիչ հետո այստեղ ժողով պիտի կայանա: Մարտական կոլեկտիվի անդամները հավաքվում են մեծ հյուղի մեջ՝ պարտըյուրոյի քարտուղարի շուրջը: Հյուղի կենտրոնում բոցավառվում է խարույկը:

— Այս գիշեր, — ասում է պարտըյուրոյի քարտուղարը, — օրակարգում ունենք մի հարց՝ Անահիտ Շահնազարյանին պարտիայի մեջ ընդունելու հարցը: Մեր Անիային, որը մեզ՝ տղամարդկանցս հետ միասին, երեք ամիս է ինչ

գործում է ֆաշիստների թիկունքում և որը դեռ
այսօր ձեզ ասրավ հաղթական գրոհի...

Պարտքյուրոյի քարտուղար Սանդրո Սար-
գըսյանը խոսում է կարճ և ինքնագոհ, ուրախ
մի հայացք է գցում հոգնած մարդկանց լուրջ
գեմքերի վրա: Նրա հայացքը հանդիպում է և՛
Անիային: Ինչքան գունատ և հուզված է թվում
նա: Կապիտանն առաջին անգամն է նրան տես-
նում այսքան գունատ, այսքան լուռ...

— Ընկերներ, հիվ է ուզում արտահայտվել:

Ոչ մի ձայն: Մի պահ ամբողջ հյուղակում
խոր լուռթյուն է տիրում: Միայն լավում է բո-
ցավառվող փայտերի դուրեկան ճարճատյունը...

Այն ժամանակ հյուղակի կիսախավար մի
անկյունից իր հսկայի հասակով վեր է բարձրա-
նում 60-ամյա մի մարդ, ամուր քայլերով մո-
տենում է դեպի Անյան, նրան վերցնում է իր
հողազոր՝ մարդու հաստ բազուկների մեջ, պինդ
գրկում է, գրկում ու համբուրում ճակատից:

— Ներքի ինձ Անյա, սիրելիս, աղջիկս, —
շնչում է նա, — ես սխալվեցի, չարաչար սխալ-

վեցի. դու դոչադ աղջիկ ես, տղամարդ աղջիկ.
դու, սիրելիս, արժանի ես մեր պարտիային...

Ու բեկբեկվում է նրա ձայնը:

Մնյան հուզված դիտում է կոլխոզնիկ մար-
դու հայրական բարի, շատ բարի դեմքը:

Ու նա նկատում է, որ էլի դողդողում են
պարտիզանի հաստ շրթները և լճանում, լճա-
նում են աչքերը...

ԼԵՌՆԵՐԻ ԱՂՋԻԿԸ

«Երբ կամենում ես գրել կնոջ մասին, գրիչդ
պետք է թաթախես ծիածանի մեջ և թիթեռնիկի
թևիկներից ցանես փոշի»:

Սյուպես էր գրում իր ժամանակին Փրան-
սիացի հռչակավոր էնցիկլոպեդիստ Դիդրոն:

Սյո, այդպես պետք էր գրել սալոնների
փափկատուն օրիորդների ու տիկիներնների մասին:
Բայց երբ խոսքը վերաբերում է մեր ժամանա-
կակից սովետական կանանց ու աղջիկներին—
ուազմադաշտի սովետական հերոսուհիներին, գրի-
չը պետք է թաթախել արյան մեջ և գրել կնոջ

անունը հերոսութեան արյունոտ և սրբազան մատյանում: Ու սրտահույզ երգեր հյուսել այն դյուցազնուհիներէ մասին, որոնց քնքուշ, քրոջական սիրտը չընկճվեց պատերազմի դաժանություններէց, արյունից ու մահից և որոնք իրենց եղբայրներէ ու ամուսիններէ հետ միասին կըսվեցին ու արյուն թափեցին որպէս մեծ հայրենասերներ...

Գալիք սերունդները սրբազան դողով կարտասանեն այդ դյուցազնուհիներէ անունները:



Վերջերս, գործուղման ժամանակ, ես նրան հանդիպեցի Տ. քաղաքի հյուսիս-արևելյան մասում գտնվող մի փոքրիկ երկաթուղային կայարանում: Հենակներէ օգնութեամբ նա փորձում էր քայլել նոր տոտիկ անող մանկիկի նման:

Աղջիկը մի բոսիկ հենվեց ուսուցիչներէց երկաթուղային վերածված վագոններէ կմախքին ու նորից մեծ դժվարութեամբ շարունակեց քայլել, յուրաքանչյուր քայլափոխին դողացնելով դեմքի մկանները:

Նրա երկու ոտներն էլ փաթաթված էին սպիտակ փաթաթանով:

Ի՞նչ էր պատահել սարյակի նման փոքրիկ ու սև այս աղջկա հետ:

Մոտենալով ես նրան, առաջարկեցի իմ օգնությունը:

—Ոչինչ, շնորհակալություն, կամաց-կամաց կգնամ մինչև վագոնը,—ասաց նա, ատամների տակ սեղմելով ցավը: Վագոն բարձրացանք:

—Ըստ երևույթին ցուրտն է տարել ձեր ոտները, ընկեր սանիտարուհի,—ասացի ես:

Նրա սևորակ աչքերում խաղաց մի մեղամաղձոտ ժպիտ: Նա մի պահ ոչինչ չխոսեց, իր հայացքն ուղղեց վագոնի լուսամուտից դուրս և խորասուզված դիտում էր կովկասյան ձյունածածկ լեռներն ու անտառները:

Գնացքը շարժվեց: Հիվանդանոց փոխադրվող վիրավոր մարտիկները երգում էին.

В тоске и тревоге

Не стой на пороге,

Я вернусь когда растает снег...

Միանժամանակ լռություն տիրեց, լավում էր միայն գնացքի հետոյը ձորի մեջ:

Ես կրկնեցի իմ հարցը: Ու այդ փոքրիրան հազիվ 18-ամյա աղջիկն ինձ պատասխանեց.

—Նախ, ընկեր լեյտենանտ, ես սանխտարուհի չեմ, ապա իմ ոտները ոչ թե ցուրան է տարել, այլ տաքը, հասկացա՞ք:

—Չհասկացա: Ի՞նչպես թե տաքն է տարել.

Պարզապես տաքը, կրակը, լսարույկը, հասկացա՞ք:

—Ոչ, ներեցեք, չհասկացա,—կրկնեցի ուշադիր նայելով նրա աչքերի մեջ:

Ես դդում էի, թե ինչ որ պատմություն կա այն թուխաչյա աղջկա հետ կապված և անպայման ուղում էի իմանալ այն: Կասկածելով, որ նա հայ է, ես հայերեն հարցրի.

—Կարձեմ դուք հայ եք:

—Այո:

—Հայաստանից:

—Այո, Լոռուց: Դուք եղևիլ եք այնտեղ, մեր չքնաղ Լոռում:

—Այո, եղևիլ եմ: Բայց Լոռվա գեղեցկու-

Թյան մտտին հետո կխոսենք: Այժմ խնդրում եմ
ինձ հասկացնել, թե ինչպես կրակը տարավ ձեր
ոտները:

— Ինչքան համառն եք, ընկեր լեյտենանտ,
ինչի՞ համար եք ուզում անպայման իմանալ:
Բայց լավ: Եկեք պայմանավորվենք այսպես,
դուք ինձ համար ճարեք մի բաժակ ջուր, իսկ
ես կպատմեմ իմ պատերազմի շրջանի կյանքը, —
ասաց նա ծիծաղելով:

Ես անմիջապես կատարեցի նրա խընդ-
րանքը:

— Պատերազմի օրերին, — սկսեց նա իր կարճ
պատմությունը, — ես որպես ուսանող գտնվում
էի Մոսկվայում: Ընկեր Մոլոտովի ազդիւոյով ու-
նեցած ելույթը լսելուց հետո, ես անմիջապես
ներկայացա զինվորական կոմիսարիատ:

— Ինձ բանակ վերցրեք, ընկեր կոմիսար, —
ասացի:

Նա գլուխը բարձրացրեց և ինձ նկատելով
ժպտաց ու մեղմորեն շնջաց.

— Դուք դեռ շատ փոքր եք, աղջիկս: Առ-
այժմ գնացեք դպրոց, ձեզ համար սովորեցեք:

Ես մի քիչ հուզված ու ջղայնացած պնդում եմ իմ պահանջը:

—Ձեզ համար դեռ շատ շուտ է սանխտարուհի լինել, ի դուր մի հուզվեք,— ինձ փորձում է հանգստացնել կոմիսարը:

—Ես պահանջում եմ ինձ բանակ վերցնել ոչ թե սանխտարուհի, այլ գնդացրորդուհի,— տաքանում եմ ես:

Վերջապես նա հարգեց իմ դիմումը: Ինձ ուղարկեց № գորամասը:

Կարճ ժամանակամիջոցում ես տիրապետեցի գնդացրին և այնքան հաջող էի կրակում, որ շատ մարտիկներ հիշելով Չապակի դիվիզիայի գնդացրորդ Սնկային, ինձ անվանում էին նրա անունով, թեև իմ անունը Սոնյա է:

Մարտական ուսումնի անցաւ և գնացի ճակատ:

Ես իմ գնդացրով շատ մարտերի մասնակցեցի: Իմ գնդակներից անհաշիվ գերմանացիներ իրենց համար գերեզման գտան մեր հողում: Բայց ահա վերջին մարտերի ժամանակ պատահեց, որ թշնամու դասավորութեան մեջ շատ

խորանալով կտրվեցինք թիկունքից ու պաշարվելով մի փոքր խումբ մարտիկներով հեռ, ընկանք Փաշիատների ձեռքը: Նրանք ինձ բռնեցին երբ ես կրակել էի վերջին փամփուշտները: Բռնեցին ու որպես «լեզու» տարան իրենց հրամանատարի մոտ, և հենց այստեղից էլ սկսվում է իմ ոտների պատմությունը:

— Դուք ո՞ր դիվիզիայից եք, — սկզբում կեղծ քաղաքավարությամբ հարց տվեց Փաշիատական սպան:

— Ես լռեցի:

Նա տոնը մի քիչ բարձրացնելով կրկնեց իր հարցը:

— Ես անանուն դիվիզիայից եմ, — պատասխանեցի ես:

Նա թաքցնելով դայրույթը, շարունակեց իր հարցերը.

— Ի՞նչքան գործ կա ձեր հատվածում:

— Չեմ հաշվել, կարիք չեմ ունեցել հաշվելու:

Ոտից գլուխ լափելով ինձ, նա արհամարհանքով և դայրույթով լի մի հայացք գցեց ինձ վրա ու գոռաց.

—Նման պատասխանների համար դուք
կգնդակահարվեք: Չեք ուղուժ խնայել ձեր կյան-
քը: Հէ որ դուք դեռ փոքր եք, ինչո՞ւ հրաժար-
վել այս կյանքից, քանի հնարավորություն ու-
նեք այս աշխարհը վայելելու:

Տիրեց լռություն:

Նրա գոռոցներն ու համոզելու փորձերը ոչ
մի արդյունք չսովեցին:

Այն ժամանակ սպան սպառնաց դաժան
տանջանքներով:

Ես դիտում էի սպայի կատաղած դեմքը,
դիտում էի սառնարյուն և ոչ մի գթություն
չէի սպասում այդ վայրագ դեմքից:

Երբ հաս էլի սպառնալիքով կրկնեց իր հար-
ցը, ես ինձ չկարողանալով զսպել գոռացի:

—Պարոն սպա, ես միտջն գիտեմ իմ գըն-
դացիքը և այն, որ մինչև այժմ վատ չի գործել
այդ գնդացիքը: Ուրիշ ոչինչ:

—Ուրիշ ոչինչ,—կրկնեց գաղաղած սպան,
արյունախում աչքերը ինձ վրա բեհռելով:

Հիալերականները խարույկ էին վառել տա-
քանալու համար: Սպայի կարգադրությամբ ինձ

ուժով քարշ տվին այդ խարույկի մոտ և ոտներս
մոտեցրին կրակին: Կատաղած, արյունկալած աչ-
քերով սպան հրամայեց, որ ոտներս ավելի մո-
տեցնեն կրակին:

Ցավին չդիմանալով ես կիսագիտակից վի-
ճակում գոռացի.

— Գազաններ, դուք ուզում եք ինձ այրել,
տանջամահ անել, բայց արդեն ես ձեզ նման
հարյուրավորներն եմ ուղարկել մյուս աշխարհը:
Դուք թանգ կհատուցեք այս գազանություննե-
րի համար:

Այդ բոպեին մերոնք հրետանային և ակա-
նանետային ուժեղ կրակ բացին խարույկի ուղ-
ղությամբ: Գերմանացիները խուճապահար թաք-
նրվեցին զանազան տեղեր: Ես ինձ գցեցի մի
փոսի մեջ և այրվածքի սուր ցավերից բացի ու-
րիշ ոչինչ չէի զգում:

Զգիտեմ ինչքան ժամանակ էր անցել, մեկ
էլ գլուխս բարձրացրի և ի՞նչ տեսեմ, մերոնք
կանգնել էին գլխիս և ուրախ, հուզմունքից
զողացող ձայնով աղաղակում էին.

— Սոնյա, Սոնյա ջան, դու կենդանի՞ ես,
դու ապրում ես...

Եվ մարտական հղբայրներս փաթաթվում
էին վզովս, փաթաթվում ու համբուրում:

— Ի՞նչ է, ինձ մեռած էիք կարծում: Դեռ
ես ձեզ հետ շաա գրոհների կգնամ, հաղթական
գրոհների,— կրկնում էի ես, կսկիծս զսպելով
ատամներիս տակ և թևով սրբելով ուրախությանս
արցունքները...

Սա հրաշք չէր, այլ իրականություն: Ես
փրկված էի:

Ինչպես տեսնում եք, ոչ միայն ցուրտը,
այլև տաքն էլ է տանում ոտները: Բայց նրանք
չկարողացան ինձ ընկճել,— վերջացրեց իր
դյուցազնապատումը՝ Լուվա հպարտ լեռների
աղջիկը՝ Սոնյա Ջիլինգարյանը.


Ու նա՛ հայրենասեր աղջիկը, լուռ լուսա-
մուտից շարունակում էր դիտել բարձրացող
արևի գունդը, կովկասյան սպիտակափառ լեռ-
ներն ու կապույտ, փիրուզյա երկինքը:



Պատ. խմբագիր՝ Հ. ՄԵԼԻՔՅԱՆ

ՎՊ 01888. Պատվեր 748: Տիրած 10000.
Տպագրական 0,9 մամ: Ստորագրված է
տպագրության 20 նոյեմբերի 1943 թ.

Հայկատնրատի տպարան, Երևան 1943



ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0040930

4. 50 266

